

# ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քրդերը Առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդներից են, որոնք թողել են հերոսական անցյալ, ազատագրական շարժման սխրալի զբր-վագներ, մշակութային հիանալի կոթողներ:

Քուրդ ժողովրդի անցյալով ու ներկայով հետաքրքրվել են ուսու և եվրոպական մի շարք գիտնականներ, ճանապարհորդներ, գրողներ: Հայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ նույնպես մտա-հոգվել են երկու բախտակից ու հարևան ժողովուրդների՝ հայերի ու քրդերի ճակատագրով, նրանց մերձեցման հարցերով: Սույն հոդվածի մեջ փորձել ենք ցույց տալ հայ-քրդական մշակութային կապերի որոշ զբրվագներ, մասնավորապես քրդական մշակույթին հայ մտավորական-ների մատուցած ծառայություններ:

Հայկական բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ հայ մտավորա-կանության առանձին ներկայացուցիչներ դեռ շատ վաղուց ջանացել են մոտիկից զբաղվել քուրդ ժողովրդի մշակույթի, հատկապես բանահյուս-տության խնդիրներով, խորամուխ լինել նրա պատմական անցյալի մեջ:

Այս տեսակետից ուշագրավ են Մատենադարանի ձեռագրերի բաժ-նում 7117 համարի տակ պահպանվող մի քանի աղոթքներ, որոնք զբր-ված են հայատառ քրդերենով: Այս աղոթքների գրառման տարեթիվը դժվար է որոշել. կարելի է ենթադրել, որ դրանք վերաբերում են վաղ միջնադարին: Վավերագրերը ցույց է տալիս, որ հեղինակը մոտ հարա-բերությունների մեջ է եղել քրդերի հետ, լավատեղյակ քրդական կրո-նական ձոներին և բանահյուսությանը և, որ կարևորն է, տիրապետել է քրդերեն լեզվին: Խոնջ է դրդել հեղինակին գրի առնել քրդական այդ ձո-ները, հետաքրքրությունը, այն հայկականի հետ համեմատելու, թե՞ ուղ-ղակի այն կորստից փրկելու նկատառումը: Վավերագրի տեքստից կարե-լի է ենթադրել, որ հայ մտավորականության այդ լայնախոհ ներկայա-ցուցիչը թերևս ցանկություն է ունեցել ցույց տալու, որ քրդական կրո-

նական ձոնները ունեն հեթանոսական ծագում և հոգեհարազատ են ինչպես քրդին, այնպես էլ հային, և դրանք տարածված են եղել նաև հայկական շրջաններում:

Մեկ այլ վավերագրում մենք հանդիպում ենք քրդական ժողովրդական բանահյուսության մի քանի նմուշների, որոնք նույնպես գրված են քրդերեն լեզվով, հայերեն տառերով: Այդ ձեռագիրը բաղկացած է 248 էջից: Այնտեղ բերված են քրդական բանահյուսության՝ հատկապես պաշտամունքին վերաբերող մի քանի դրվագներ, որոնք արտահայտված են հիմնականում բեյթերի միջոցով: Դրանք գրված են պարզ ու հստակ կուրմանջի բարբառով:

Քրդական տեքստը սկսվում է ձեռագրի 119 և ավարտվում 124-րդ էջով: Ինչպես երևում է, այս անհայտ հեղինակը լավ է տիրապետել քրդերենին, ծանոթ է եղել քրդական բառ ու բանին: Բերված բեյթերի, առածների ու ասացվածքների մի մասը պատկանում է միջնադարյան քուրդ նշանավոր բանաստեղծ Ֆակիհ Տայրային, որի ստեղծագործությունները առ այսօր լայն տարածում ունեն քրդերի մեջ: Ըստ երևույթին, քուրդ բանաստեղծի բեյթերը ընդունելություն են գտել նաև հայկական շրջաններում և հոգեհարազատ են եղել այն հայերին, որոնք տիրապետել են քրդերենին:

Ուշագրավ են № 3049 ձեռագրի 125-րդ էջում պահպանված քրդական մի քանի ասացվածքներ, որոնք գրի են առնված XVIII դարում: Քրդական ժողովրդական բանահյուսության նմուշներ կան նաև № 5060, 771, 10036 ձեռագրերում: Այս ձեռագրերի մեջ հետաքրքրության արժանի է № 771 ժողովածուում տեղ գտած քրդերեն մի շարք բառերի թարգմանությունը:

Հայ մտավորականության հետաքրքրությունը քրդական մշակույթի նկատմամբ մեծանում է հատկապես XIX դարի սկզբներից: Այդ շրջանի հայ մտավորականության ականավոր դեմքերից է Դովաս Ինճիճյանը, որը բազմիցս շրջագայել է քրդերի մեջ, ուսումնասիրել նրանց բանահյուսությունն ու ազգագրությունը, ծանոթացել քուրդ ժողովրդի պատմությանը: Նա իր բազմաթիվ աշխատություններում անդրադարձել է քուրդ ժողովրդի ծագմանը, աշխարհագրությանը և հատկապես հայ-քրդական հարաբերություններին:

Հետաքրքրական են նրա ուսումնասիրությունները կորդուխների ու Կորդվաց աշխարհի, մարերի ու Մարաստանի վերաբերյալ: Այս առթիվ հետաքրքիր տեղեկություններ կան նրա «Ստորագրութիւն հին Հայաստա-

նեայց» աշխատութիւնում, որը լույս է տեսել 1822 թ. Վենետիկում։ Այս աշխատութիւնում նա անդրադառնում է քրդերի էթնիկական ծագմանը, այն առնչելով կորդուխների և մարերի հետ։

Ղ. Ինճիճյանի «Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» աշխատութիւն I, II և III հատորներում բազմաթիւ էջեր են նվիրւած հայ-քրդական հարաբերութիւններին։ Հեղինակը հակված է այն մտքին, որ պետք է խորապես «ուսումնասիրել այդ հարեան ժողովրդի պատմութիւնը, մշակութիւնը»<sup>2</sup>։

Քուրդ ժողովրդի ծագումը, նրա պատմութիւնը, գրականութիւնը, ազգագրութիւնը, քրդերի մեջ լուսավորութիւն տարածելու հարցերը լայն հետաքրքրութիւն առաջ բերեցին XIX դարի երկրորդ կեսի հայ մտավորականութիւն մեջ, հատկապես այն ժամանակ, երբ ինչպե՛ս Արեւմտյան Հայաստանում, այնպե՛ս էլ Արեւելյան Հայաստանում սկսեցին լույս տեսնել հայկական մի շարք թերթեր ու ամսագրեր, երբ հայ հրապարակախոսական միտքը սկսեց իր ծաղկումն ապրել։

Հայ ազատագրական շարժման գաղափարախոսներ՝ Գր. Արծրունին, Մկրտիչ Խրիմյանը, Խաչատուր Աբովյանը, Պաղդասար Նորատուճկյանը, Մ. Մամուրյանը, Գր. Զիլինկիրյանը, Հ. Սվաճյանը և շատ ուրիշներ արծարծել են հայ-քրդական հարաբերութիւնների բազմաթիւ հարցեր, առաջ քաշել օտար լծի դեմ երկու ժողովուրդների ջանքերի միավորման ծրագրեր։

Հայ-քրդական մշակութային կապերի պատմութիւն մեջ բացառիկ տեղ ունի հայ նոր գրականութիւն հիմնադիր, մեծ լուսավորիչ ու մանկավարժ Խաչատուր Աբովյանի «Քրդեր և եզդիներ» ուշագրաւ ուսումնասիրութիւնը։

Հայ անվանի գրող, քուրդ ժողովրդի բարեկամ Հրայր Քոչարը «Ժողովուրդների բարեկամութիւն մեծ ջատագովը» խորագրով հոգւածում գրում է. «Աբովյանը քուրդ ժողովրդի անկեղծ բարեկամն էր։ Նա ցանկանում էր, որ քուրդ եղբայրական ժողովուրդը ստանա իր ազատութիւնը և անկախութիւնը, դառնա իր իրավունքի տերը, դառնա իր գիր ու գրականութիւն տերը, ազատագրւած ժողովուրդների մեջ իր իրավասու տեղը ունենա։ Իսկ ես, որ այս տողերը Աբովյանի մասին եմ գրում, ինքս էլ քուրդ ժողովրդին սիրում եմ, մանկութիւնս անց եմ կացրել քրդերի մեջ, երգել եմ քրդական երգեր։ Քուրդ ժողովրդին ցանկանում եմ այն ամենալավը, ինչ բարեկամը բարեկամին է ցանկանում, ես ցանկանում եմ, որ շուտ գա այն օրը, որ քուրդը համաշխարհային

հանրահռչակ գրականության հետ մեկտեղ իր մայրենի լեզվով ընթերցի Արուսյանի «Վերք Հայաստանին»<sup>3</sup>:

Մեծ ու անգնահատելի է խաշատուր Արուսյանի դերը քրդական մշակույթի ուսումնասիրման մարզում: Նա ուշագրավ մտքեր է հայտնել թուրք ժողովրդի բանահյուսության ու ազգագրության, լեզվի ու գրականության վերաբերյալ, ցույց է տվել այդ ժողովրդի մտածելակերպը, ազգային հոգեբանությունը:

Գերմանացի ճանապարհորդներ Մորից Վազների և Ավգուստ ֆոն Հաքստհուզենի հետ նա շրջագայել, ծանոթացել է ինչպես հայ, այնպես էլ թուրք ժողովրդի կենցաղին:

Հայ ականավոր գրող Ակսել Բակունցը Արուսյանին նվիրված իր աշխատության մեջ նշում է, որ 1829 թ. պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի հետ Արարատի գագաթը բարձրանալիս ճանապարհին հանդիպում է քրդերին, զրուցում է նրանց հետ և թարգմանում Պարրոտին<sup>4</sup>: Դա հաստատում է, որ Արուսյանը տիրապետում էր քրդերենին: Արուսյանը հետագայում էլ երկու ամիս մնում է նրանց մոտ, արժանանալով ջերմ ընդունելության: Այդ երկ վկայում նրա և Իբրահիմ աղայի հանդիպումները 1845 թ. դեկտեմբերի 31-ին և 1846 թ. հունվարին: Իբրահիմ աղան Արուսյանին նվիրում է իր ձին, իսկ ձին քրդերի մոտ ամենաթանկ ու ամենահարգի նվերն է, սակայն, Արուսյանը հրաժարվում է այն ընդունել և իր հերթին Իբրահիմ աղային է նվիրում մի գեղեցիկ յափուռ<sup>5</sup>:

Քրդերի հետ Արուսյանի բարեկամությունը, փոխադարձ հարգանքը գալիս է Արուսյանի ընտանիքից: Նրանց օջախի դուռը միշտ բաց է եղել քրդերի համար, իսկ քրդերինը՝ նրանց համար:

Հավանաբար այս բոլորը Արուսյանի մեջ ցանկություն առաջացրին ուսումնասիրելու ու գրելու իր «Քրդեր և եզդիներ» արժեքավոր հոդվածը: Այս աշխատանքը գրելու համար նա օգտվել է պատմական սկզբնաղբյուրներից, օգտագործել է հայ և եվրոպական գրականությունը, զրուցել է ժամանակի հասարակական-քաղաքական դեպքերի աչքի ընկնող մասնակիցների և ականատեսների հետ:

Արուսյանն իր քննադատական խոսքն է ուղղում այն պատմաբաններին, որոնք քրդերի ծագման մասին տվել են ոչ ճիշտ բացատրություններ և հանգել սխալ եզրակացությունների: Արուսյանի հոդվածի մի մասը՝ «Քրդերը» խորագրով, գրված է 1846 թ. և նույն թվականին հանձնվել է Կովկասի փոխարքայի գրասենյակին<sup>6</sup>: Հարց է ծագում՝ ինչու է հանձնվել Կովկասի փոխարքայի գրասենյակին, այն տպագրելու նպատակով, թե՛ ուղղակի հանձնարարություն է եղել գրասենյակի կողմից մի ընդար-

ձակ հողված գրելու քրդերի մասին: Ուսումնասիրութիւնները վկայում են, որ Կովկասում Արովյանը ճանաչված է եղել որպէս քուրդ ժողովրդի պատմութեան ու ազգագրութեան գիտակի և այդ հայտնի է եղել Կովկասի փոխարքայական գրասենյակին: Ըստ երևութիւն նա հատուկ հանձնարարութեամբ է գրել այս հողվածը, որը միայն երկու տարի անց՝ 1848 թվականին է տպագրուում «Кавказ» թերթի 46, 47, 49, 50 և 51-րդ համարներում: Սակայն, դժբախտաբար, թերթը կրճատումներով է հրատարակել այս հողվածը և չի տպագրել Արովյանի գրի առած այն քրդական երգերի տեքստերը, որը նա ժամանակին հանձնել է փոխարքայի գրասենյակին: Պետք է նշել, որ այս հողվածի ամբողջական տեքստին ծանոթ է եղել ուս գրող և քաղաքական գործիչ Մուրավյովը, որը Արովյանի հետ Հայաստանում շրջագայելիս, նրանից տեղեկացել է քրդերի մասին և կարդացել ու դրական գնահատական է տվել այդ հողվածին: Ամբողջական բնագրին ծանոթ է եղել նաև գերմանացի գիտնական Մորից Վազենը, որն այն լույս է ընծայել 1848 թ. Շտուտգարտում: Հողվածը հետագայում թարգմանում և իր «Ճանապարհորդութիւն ի Հայաստանի» խորագրով գրքում տեղադրում է Շ. Փ. Ճամճյանը (Վիեննա, 1851): Այս հողվածը ավելի ընդարձակ է, նրանում պահպանված են քրդական բանահյուսութեան մի քանի բնագրեր:

1848 թ. «Кавказ» թերթը փետրվարի 21-ին և 28-ին (№ 8 և 9) տպագրում է Արովյանի նաև «Եզդիներ» խորագրով հողվածը՝ առանց ստորագրութեան: Այս հողվածի բնագիրը եղել է գերմաներեն, հետագայում խմբագրութիւնը թարգմանել է ռուսերեն:

Արովյանը զբաղվել է քրդական ժողովրդական բանահյուսութեան հավաքագրմամբ, մշակմամբ ու թարգմանութեամբ, որի միայն մի մասն է հրատարակվել, մնացածը պահպանվում է Արովյանի արխիւում:

Լինելով հայ մտավորականութեան առաջադեմ ներկայացուցիչներից մեկը, Արովյանը պայքարում է Անդրկովկասյան ժողովուրդների՝ հայերի, վրացիների, ադրբեջանցիների, քրդերի բարեկամութեան ամրապնդման համար: Նա միայն իր «Քրդեր և եզդիներ» ուսումնասիրութեան մեջ չէ, որ անդրադարձել է հայ և քուրդ ժողովուրդների բարեկամութեանը: Իր մյուս ստեղծագործութիւններում, հատկապէս «Վերջ Հայաստանի» վեպում, ցույց է տալիս, թե ինչպէս Աղասու խմբի մեջ հանդես են գալիս նաև մի խումբ քրդեր, որոնք երզվում են հայերի հետ միասին միջնա իրենց արյան վերջին կաթիլը պայքարել թուրքական և իրանական բռնակալների դեմ: Արովյանը միևնույն ժամանակ ցույց է տալիս քուրդ ժողովրդի հավատարմութիւնը, շիտակութիւնն ու պարզութիւնը:

Արուվյանը եղել է այն կարծիքին, որ հայ և քուրդ ժողովուրդները բարեկամությունը գալիս է դարերի խորքից, որ նրանց մեջ թշնամություն սերմանողը եղել է օսմանյան կառավարությունը:

Անդրադառնալով հայ-քրդական դաշնակցությանը, նրանց կապերին ու համատեղ ազատագրական շարժումներին, նա գրում է. «...իրենց հարևան ազգերից ոչ մեկի հետ նրանք (քրդերը—Կ. Զ.) այնպես սերտ չեն կապված, այնպես համատեղ չեն գործում, ինչպես հայերի, որոնց նրանք անվանում են եղբայրներ»<sup>9</sup>:

Մեկ այլ տեղ նա գրում է. «Ով հայից մի բան հափշտակի, բոլորովին կվտարվի իր համայնքից: Այդ պատճառով նրանց (քրդերի—Կ. Զ.) համար սուրբ և անձեռնմխելի է այն ամենը, ինչ պատկանում է հայ ժողովրդին: Նրանք ավելի շուտ իրենց ունեցվածքը կտան հային, քան թե նրանցից մի բան կվերցնեն, և նրա ունեցվածքը կպաշտպանեն իրենց կյանքի գնով»<sup>10</sup>:

Քուրդ ժողովրդի բանավոր խոսքի արվեստը բարձր է գնահատվել Արուվյանի կողմից և հիացմունք պատճառել նրան: Արուվյանի համոզմամբ քուրդ ժողովուրդն օժտված է ստեղծագործական բարձր կարողություններով, վառ երևակայությամբ:

Գրականագետ Գ. Վահանյանը քրդական բանահյուսության մարզում Արուվյանի երախտիքի մասին գրել է, որ նա «իր հանճարի ուժով բաց է արել քրդական ժողովրդական պոեզիայի բանավոր արվեստի մի քանի ծալքեր, նա ցույց է տվել այդ արվեստի կախարդական գաղտնիքները»<sup>11</sup>:

Արուվյանը որպես քրդական մշակույթի գիտակ և գնահատող՝ կարողացավ այդ ճնշված ու հալածված ժողովրդի կյանքին ու սովորություններին ժանոթացնել ոչ միայն ուս, այլև եվրոպական ժողովուրդներին:

XIX դարի հայ հասարակական մտքի ականավոր ներկայացուցիչներից «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունին իր թերթի էջերում հաճախակի լուսաբանում էր քուրդ ժողովրդի պատմությանը, բանահյուսությանը, ազգագրությանը նվիրված հարցեր և ինքն էլ հանդես գալիս մի շարք հոդվածներով:

Նրա ուսումնասիրությունները հետաքրքիր երևույթ են հայ-քրդական մշակութային կապերի պատմության մեջ: Քրդական մշակույթի մասին գրած հենց առաջին հոդվածում, որը վերնագրել է «Առաջին քայլերը»<sup>12</sup>, նա հայ մտավորականությանը կոչ է անում ուսումնասիրել իրենց հարևան ու բարեկամ քուրդ ժողովրդի անցյալը, բոլոր հնարավոր միջոց-

ները օգտագործել՝ ստեղծելու և ամրապնդելու հայ-քրդական բարեկամական կապերը: Հետագայում իր մի շարք հոգվածներում նա անդրադառնում է քուրդ ժողովրդի պատմության որոշ հարցերին:

1902 թվականին, Արծրունու մահից հետո, «Մշակի» մի քանի համարներում տպագրվում է նրա «Գլուխգար» խորագրով պիեսը. հետագայում այն լույս է տեսնում առանձին գրքույկով<sup>13</sup>: Ինչպես երևում է այս ստեղծագործություններից, հեղինակը լավատեղյակ է քրդական բանահյուսությանը և հատկապես՝ ազգագրությանը: Այս ստեղծագործության մեջ նա կարողացել է վեր հանել տվյալ ժամանակաշրջանի անհավատարմությունները, որոնք թշնամու ձեռքով հրահրվում էին երկու ժողովուրդների միջև: Իր մյուս գործերում և հոգվածներում նա շոշափում է իր ապրած ժամանակաշրջանի պատմական ու հասարակական խնդիրները, գալիս հետաքրքիր եզրահանգումներին:

Գրիգոր Արծրունին իր թերթի էջերում հաճախակի անդրադառնում էր Արևմտյան Հայաստանի քրդախոս հայերի և քրդերի ուսուցման խնդրին: Թերթի համարներից մեկում մենք կարդում ենք, թե ինչպես Տարոնում, Սասունում, Շատախում, Դիարբեքիում հայերը և քրդերը ապրում էին կողք-կողքի՝ միևնույն սոցիալ-տնտեսական պայմաններում, սերտ բարեկամական կապերով: Բերված է մի ուշագրավ փաստ, թե ինչպես երեխաների համար առաջին անգամ 1878 թ. Խակի գյուղում (Բաղեշի և Սղերդի միջև) բացվում է դպրոց, ուր հաճախում էին 500 երեխաներ: Դժբախտաբար, քուրդ վերնախավը չի աջակցում այդ գործին. ավելին, հոգևորականության ներկայացուցիչները՝ շեյխերը և փիրերը, այն մեղք համարելով, քուրդ ազգաբնակչությանը քարոզում էին երեխաներին հանել դպրոցից: Այս գործի խափանման մեջ խառն էին թուրքական իշխանությունները, որոնք ջանում էին գծառնություններ առաջացնել այդ գավառների հայերի ու քրդերի միջև<sup>14</sup>:

Հայ-քրդական մշակութային կապերի ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքրական է Գրիգոր Արծրունու «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը» աշխատությունը<sup>15</sup>: Հեղինակը երկար տարիներ ուսումնասիրելով քրդերի պատմությունը, նրանց սոցիալ-տնտեսական վիճակը, ազգագրությունը, բանահյուսությունը, մի շարք հետաքրքիր եզրահանգումներ է անում: Անդրադառնալով քուրդ ժողովրդի կենցաղին, նա բարձր է գնահատում քրդուհուն, նրա դերը ընտանիքում, կենցաղում: Նա գրում է. «Քուրդ կինը մասամբ մասնակցում է մարդու պարամյունքների մեջ, նույնպես պարապում է մի քանի արհեստներով, ինչպես օրինակ գորգեր, շալեր և այլ կարպետներ գործելով»<sup>16</sup>:

Ինչպես Գրիգոր Արժրունու, այնպես էլ «Մշակ» թերթի մյուս խմբագիրներ Ս. Քալանթարյանի, հրատարակիչ, հրապարակախոս Հ. Առաքելյանի և այլոց օրոք քրդերի մասին տպագրվել է շուրջ 323 հոդված ու թղթակցություն։ Սա ցույց է տալիս հայ մտավորականների մեծ հետաքրքրությունը դեպի քուրդ ժողովուրդը և քրդական մշակույթը։

Հայ-քրդական մշակութային կապերի պատմության մեջ իր արժանի լուսան ունի հայ առաջադեմ մտավորականության ներկայացուցիչ մանկավարժ, ազգագրագետ, գրող Հակոբ Ղազարյանը։ Ուշագրավ են նրա երեք գեղարվեստական ստեղծագործությունները։

Նրա «Գյուլն» վիպակը տպագրվել է «Տարազ» թերթի 1890 թ. 6—8-րդ համարներում։ Հեղինակը կարողացել է իրական փաստերի հիման վրա նկարագրել քրդական սիպկի ցեղի պայքարը թուրք բռնակալների դեմ և այդ ցեղի առաջնորդ Մահմուդ բեգի հերոսությունը, նրա ազնիվ ու անշահախնդիր գործողությունները հանուն իր աշիրաթի։ Հեղինակը ծանոթ լինելով քուրդ ժողովրդի բնավորությանը, նրա նիստուկացին, նկարագրում է քուրդ ժողովրդի հերոսությունը, նրա ազատատենչ ձգտումները, քրդուհու գեղեցկությունը։ Քրդուհու հերոսությունը, վեհանձնությունը, ազնվությունը գեղեցիկ կերպով արտահայտված են Գյուլնի այն խոսքերում, որոնք ուղղված են սիպկի ցեղի առաջնորդ Մահմուդ բեգին։

Ով որ ստրուկ ծնվի, մեռնի  
Ողբալու նա է արժանի,  
Քաջ դյուցազնը միշտ անմահ է  
Թե մեռնի էլ նա կենդանի։

Թող սեպկցի օրիորդները  
Հագնեն իրենց սիրուն զարդերը,  
Մաղկանց փնջեր ձևենքին,  
Գան ողջունեն Մահմուդ բեգին։

Մնավ ազատ, ազատ մեռավ,  
Իրենց ցեղին պատիվ բերավ,  
Այո, լավ է ազատ մեռնել,  
Քան ուրիշի ստրուկ ապրել<sup>17</sup>։

Հեղինակը կարողացել է ամբողջությամբ բացահայտել քրդուհու էությունը։ «Թե քաջությամբ, թե գեղեցկությամբ և թե աշխատասիրությամբ Գյուլնն հայտնի էր ամբողջ ցեղի աղջիկների մեջ։ Ոչ մի աղջիկ չէր կա-

որոշ նրա հետ մրցել թե՛ ձիավարության և թե՛ զինավարժության մեջ»<sup>18</sup>։

Այս գեղարվեստական գործում կարելի է հանդիպել ազգագրական բնույթի նյութերի, ինչպես, օրինակ, քրդական օբաների նկարագրությանը, վրանների կառուցվածքին, կահկարասիին, քրդական այն խալիներին, կարպետներին, ջիջիմներին, որոնք գործվել են քրդահույճ ձևերով։

Հակոբ Ղազարյանի հաջորդ գեղարվեստական ստեղծագործությունը՝ «Յերո» խորագրով, հրատարակվել է «Աղբյուրի» և «Տարազի» 1892 թ. առանձին համարներում և նույն թվականին էլ ամբողջությամբ, առանձին գրքով, հրատարակվել է Թիֆլիսում։

Նրա երրորդ գեղարվեստական երկը՝ «Նունիսուրը», բոլորովին տարբերվում է վերը նշված ստեղծագործություններից։ Հեղինակը անդրադարձել է հայ-քրդական հարաբերություններին։ Նա վեր է հանել որոշ քուրդ աշիրաթապետների ոտնձգությունները, որոնք տեղի էին ունենում Պարսկաստանի հայկական գավառներում, թուրքական ու պարսկական, կառավարող շրջանների անմիջական հրահրմամբ։ Նա միևնույն ժամանակ ցույց է տվել հայ-քրդական զինակցական կապերը, քուրդ աշխատավոր ժողովրդի ազնիվ ու անշահախնդիր վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ<sup>19</sup>։

Խոսելով հայ-քրդական բարեկամական կապերի մասին, նա գրել է, որ քրդերը մեծ պատկառանք ունենին հատկապես հայ հոգևորականության նկատմամբ։ Նրանք ոչ միայն հարգում, այլև երկրպագում էին այն հայ հոգևորականին, որը հետաքրքրվում էր իրենցով, բարեկամություն էր հաստատում իրենց հետ, պետք եղած ժամանակ նրանք փոխադարձաբար օգնում էին միմյանց։ Հակոբ Ղազարյանը խոսում էր նաև այդ երկու ժողովուրդների կենցաղում եղած փոխազդեցությունների մասին։

Հայ-քրդական փոխհարաբերությունների մասին հաճախ է գրել Բաֆֆին։ Իր «Ծանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս» հոդվածում նա ցույց է տվել հայ և քուրդ աշխատավոր զանգվածների բարեկամությունը, որը իր ցայտուն արտահայտությունն է գտել նրանց քրիվայության մեջ (կնքահայր—Կ. Չ.)։ Քրիվա կարող էին լինել այն մարդիկ, որոնք միմյանց նկատմամբ հավատարիմ ու անկեղծ էին<sup>20</sup>։ Իսկ մեկ այլ հոդվածում նա անդրադարձել է քուրդ ժողովրդի ազգագրությանը, բարձր է գնահատել քրդերի հյուրասիրությունը<sup>21</sup>։ Միևնույն ժամանակ ցույց է տվել այն հակամարտությունները, որոնք եղել են քրդական որոշ ցեղերի ու հայերի միջև, վեր հանել այդ հակամարտությունների շարժառիթներն ու դրդապատճառները։

Իր հարցադրումներով, դեպքերի նկարագրություններով հարուստ է Բաֆֆու «Տաճկահայք» աշխատությունը<sup>22</sup>։ Այստեղ հեղինակը նկարագրել է հայ և քուրդ ժողովուրդների սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, թուրքական կառավարության ներքին քաղաքականությունը, հայքոգական հարաբերությունները և եվրոպական տերությունների դիրքորոշումը այդ հարցում<sup>23</sup>։

Բաֆֆին անդրադառնում է նաև այն հարցին, թե ինչպես է քուրդ գյուղացին հալածվում թուրք պաշտոնյաների կողմից, ցույց է տալիս քուրդ աշխատավորի սոցիալ-տնտեսական ծանր վիճակը։ Այս աշխատությունում մի շարք էջեր նվիրված են քրդական շարժումներին և հայքոգական հարաբերություններին, քրդական իշխանություններին։ Խոսելով քրդական շարժումների մասին, Բաֆֆին նշում է, որ քրդական ցեղապետերը հաճախակի դիմում էին հայ էֆենդիներին և հայ հոգևոր առաջնորդներին, որպեսզի նրանք օգնեն<sup>24</sup> միացյալ ուժերով պայքարելու թուրքական կառավարության դեմ։ Քրդերին օգնում էին հատկապես Աղբակի, Շատախի, Բալուխի, Մոկաց և Սասունի հայերը։ Այս շրջանների քրդերի մասին Բաֆֆին գրում է, որ նրանք այնքան էին մտերմացել հայերի հետ, որ կատարում էին հայերի մի քանի կրոնական արարողությունները. «պահում էին ս. Սարգսի և ս. Գևորգի պատերը, զոհ էին մատուցում հայոց նշանավոր ուխտատեղերում»<sup>25</sup>։ «Ջալալեդդին» և «Կայծեր» վեպերում Բաֆֆին քննադատում է թուրքական կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը, որն այդ ժամանակ ջանում էր ազգամիջյան կոփվեք հրահրել հայերի ու քրդերի միջև, և դա մասամբ նրան հաջողվում էր։ Բաֆֆին ընդգծում է, որ «Թուրքերը քրդերին լարում էին հայերի դեմ, օգտագործելով կրոնը, մահմեդականությունը»<sup>26</sup>։ Միաժամանակ նա նշում էր, որ ոչ բոլոր քրդերն էին խաբվում թուրքական սիրաշահումներով, նրանցից շատերը ոտքի էին կանգնում և հայերի հետ միասին պայքարում թուրքերի դեմ, դա վերաբերում էր հատկապես հայդարանցիներին<sup>26</sup>։ Քուրդ Մստոն, որը «Ջալալեդդին» վեպի հերոսներից է, ատելությամբ էր լցված դեպի թուրքական կեղեքիչները և մեծ հարգանքով էր համակված դեպի հայերը։ Նա ծառայում էր վեպի հերոս Սարհադի հոր մոտ, իր տիրոջ մահից հետո Սարհադի հետ կազմում են միացյալ ջոկատ և պայքարում Ջալալեդդինի դեմ և, ինչպես Բաֆֆին է ասում, «նա մինչև մահ հավատարիմ է մնում Սարհադուն»<sup>27</sup>։

Բաֆֆին բարձր է գնահատում քրդի հավատարմությունը, նրա հերոսությունը։ Դա շատ գեղեցիկ արտահայտված է Օմար աղայի կերպա-

րում: Օմար աղան չի մասնակցում Զալալեդդինի արշավանքներին: Իմա-  
նալով այդ մասին, գալիս է Բարդուղիմեոս առաքյալի վանքը և տեղեկաց-  
նում վանահորը՝ Նդիազար վարդապետին: Քե մի քանի օրից հետո ինչ-  
պիսի դառը վիճակ է սպասվում Աղբակի հայերին: Նա խորհուրդ է տա-  
լիս օգուտ քաղել վանքի անմատչելի ամրությունից և այդ նվիրական-  
ներդը ընտրել որպես պաշտպանական դիրք և այնտեղ հավաքել շրջա-  
կա հայոց գյուղերի հարստությունները, պայքարել թշնամու դեմ: Օմար  
աղան խոստանում է ինքն էլ միանալ վանահորը և, ինչպես Րաֆֆին է  
ասում, «Իր խոստումը կատարեց գործով»<sup>28</sup>: Նա վանքի սրբություն-  
ները թաքցնում է մի ապահով վայրում և զերծ պահում ավերումից ու  
կողոպտումներից, և երբ վտանգն անցնում է, այդ ամենը վերադարձնում  
է վանքին:

Ուսումնասիրելով քրդական ժողովրդական բանահյուսությունը,  
Րաֆֆին բարձր է գնահատում ժողովրդական հեքիաթները, զրույցնե-  
րը, ավանդությունները, հավատալիքները և ազգագրական ու բանահյու-  
սական այլ նյութերը: Այս առթիվ նա գրում է. «Մի ազգի կամ մի ժո-  
ղովրդի բարոյական և մտավոր պատկերներն ավելի ճշմարտությամբ  
երևում է նորա բանաստեղծության մեջ. կամենում ես ճանաչել նորա  
հոգին, կարգա նորա հրգեքը»<sup>29</sup>: Բարձր գնահատելով քրդական ժողո-  
վրդական բանահյուսությունը, նա այն համարում է գիտական ուսում-  
նասիրության աղբյուր: Եվ պատահական չէ, որ այն լայնորեն օգտագոր-  
ծելով իր ստեղծագործությունների մեջ, Րաֆֆին ցույց է տվել նաև  
հայ-քրդական բանահյուսության փոխազդեցությունը և բարձր գնահա-  
տել հատկապես ժողովրդական երգն ու երաժշտությունը: Այս առթիվ նա  
գրում է. «Ժողովրդական անգիր բանահյուսությունը կենդանի է քրդերի  
մեջ. նա ծագելով ամբողջի իսկական կյանքից, ունեցել է նույն բնավո-  
րությունը և ոգին, որով ապրում էր ինքը ամբողջը:

Հովվերգությունը և քաջազնական հանգերգությունը գլխավոր տեղն  
են բռնում նրանց բանաստեղծության մեջ, առաջինը, որպես խաշնարած  
ցեղի կյանքի առաջնություն, երկրորդը, որպես նրա պատերազմական  
հոգու արտահայտություն: Հովվական երգերը տխուր էին ու մելամաղձոտ,  
նրանք խիստ մեղմ կերպով ներդաշնակվում էին հովվի սրնգի խուլ և  
ձգական հնչյունների հետ: Իսկ պատերազմական երգերը կրակոտ, վառ-  
վրդուն ու խրոխտ էին...»<sup>30</sup>, Իսկ մեկ այլ տեղ նա գրում է. «Ինձ մինչև  
այսօր չի պատահել լսել մի երգ, որ այնքան հատկանիշ լինի ազգային  
բնավորությանը, որ այնքան արտահայտող լինի ժողովրդական ոգուն,  
որպիսին է քրդերի երգը»<sup>31</sup>:

Հանդիպելով քուրդ աշուղին և լսելով նրա մեղամաղձոտ երգը, Բաֆ-  
ֆին տարվում է այդ երգով, քանի որ այդ երգը հարազատ է նրան:  
«Քուրդ աշուղի երգածները հասարակ տողեր չէին, նա երգում է մի ամ-  
բողջ վեպ, որ ժողովրդական պոեմը առել էր կենդանի անցքերից»<sup>32</sup>։ Իսկ  
մեկ այլ տեղ նա գրում է. «Ոչ մի նշանավոր երևույթ չէր կորցնում իր  
հետքը քուրդի կյանքի մեջ. ժողովրդական ոգին իր տողերով կամ փա-  
ռաբանում էր մեկի քաջագործությունը, կամ պարսավում էր մյուսի թու-  
լասրտությունը: Ծածկվեցավ մեկը թշնամուց կամ խույս տվեց նա կուլի  
դաշտից, մյուս օրը կանայք և աղջիկները հորինում էին նրա մասին  
զանազան կծու պարսավներ, և երգը արագ թռչում էր ամեն երեխայի,  
ամեն շափահասի բերանից»<sup>33</sup>։

Հայ-քրդական մշակութային կապերի պատմության մեջ իր ուրույն  
տեղն է գրավում թարգմանական գրականությունը, որի հիմքը դրվեց  
XIX դարի երկրորդ կեսին՝ Արևմտյան Հայաստանում: Հայ մտավորա-  
կաններից շատերը զբաղվել են հայերենից քրդերեն և քրդերենից հա-  
յերեն թարգմանությամբ: Նախ հայերենից քրդերեն թարգմանությու-  
նը կատարվել է այն նպատակով, որպեսզի կրոնական գրականությունը  
ժանոթացնեն քրդախոս հայ ընթերցողին, սակայն, միևնույն ժամանակ  
հայ մտավորականներից շատերը ջանում էին հենց քրդերին ժանոթաց-  
նել քրիստոնեական կրոնական գաղափարախոսությունը:

Հայ մտավորականության լայնախոհ ներկայացուցիչները ամենուր  
մտահոգվել են հայերի ու քրդերի ազատագրության խնդրով, նրանց  
մերձեցման ու համատեղ մշակույթի զարգացման հարցերով: Հայկական  
աղբյուրները և գրականությունը պարունակում են քուրդ ժողովրդի պատ-  
մության ու մշակույթի վերաբերյալ բացառիկ կարևոր նյութեր, որոնք  
շատ դեպքերում ունեն եզակի բնույթ. այստեղից էլ բխում է այդ ուղ-  
ղությամբ ուսումնասիրությունները շարունակելու անհրաժեշտությունը:

К. А. ЧАЧАНИ

## ИЗ ИСТОРИИ АРМЯНО-КУРДСКИХ КУЛЬТУРНЫХ СВЯЗЕЙ

### Резюме

В статье рассматриваются вопросы армяно-курдских культур-  
ных взаимосвязей, в частности, роль представителей армянской  
интеллигенции, а также прессы в деле освещения вопросов исто-

рии и культуры курдского народа. Особое внимание уделяется высказываниям Х. Абовяна, Раффи, Гр. Арцруни и др. о курдах и их культуре, о путях сближения двух народов—курдов и армян в их общей борьбе против чужеземного ига.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 7117, էջ 144 բ։
2. Ղ. Ինճիբյան, Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց, հ. 1, Վենետիկ, 1835, էջ 80, 319։
3. „Рйа тэзэ“, 1955, № 72։
4. Ա. Բակունց, Խաչատուր Աբովյանի «Անհայտ բացակայումը», Երևան, 1932, էջ 36։
5. Խ. Աբովյան, Եժ, հ. 8, Երևան, 1958, էջ 450։
6. Նույն տեղում։
7. Ե. Զարեհի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Խ. Աբովյանի ֆոնդ։
8. Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Երևան, 1953։
9. Խ. Աբովյան, Եժ, հ. 8, էջ 260։
10. Նույն տեղում, էջ 261։
11. „Рйа тэзэ“, 1961, № 69։
12. «Մշակ», 1881, № 207։
13. «Մշակ», 1902, № 281—283։
14. «Մշակ», 1881, № 23, 24։
15. Գ. Արծրունի, Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894։
16. Նույն տեղում, էջ 16։
17. Յակ. Ղազարյան, Գյուլի, Թիֆլիս, 1890, էջ 60։
18. Նույն տեղում, էջ 12։
19. Յակ. Ղազարյան, Խոնխուր, Թիֆլիս, 1893, էջ 34։
20. «Փորձ», 1877—78, № 3, էջ 218։
21. «Մշակ», 1903, № 62։
22. Բաֆֆի, Տաճկահայք, 1913, Վիեննա։
23. Նույն տեղում, էջ 123։
24. Նույն տեղում։
25. Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1955, էջ 98։
26. Նույն տեղում, էջ 16։
27. Նույն տեղում, էջ 29—30։
28. Նույն տեղում, էջ 47։
29. Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 80։
30. Բաֆֆի, Կայծեր, Երևան, 1947, էջ 121։
31. Նույն տեղում, էջ 228։
32. Նույն տեղում։
33. Նույն տեղում, էջ 121։